ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ «ՀԱՂԹԱՆԱԿ» ԶԲՈՍԱՅԳՈՒ ԵՎ «ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ» ԱՅԳՈՒ ՕՐԻՆԱԿՈՎ

Զեկուցող՝ Մ. Բարաղամյան
Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի
Մշակույթի և տուրիզմի վարչության տուրիզմի բաժնի պետ

Քաղաքն այն միջավայրն է, որը բնական լանդշաֆտի իրեն հարմարեցման նպատակով ֆունկցիոնալ փոփոխություններ կատարելու ճանապարհով, մարդը փորձել է ստեղծել իր համար կենսագործունեության բարենպաստ և բավարարող ապրելատեղի: Այսինքն՝ քաղաքն այն միջավայրն է, որտեղ մարդը սպառիչ կարող է ապահովել իր իրավունքների իրացման ամբողջ սպեկտրը՝ աշխատանք, հանգիստ, մտավոր և հոգեկան ազատ արտահայտումներ:

Քաղաքային զբոսաշրջությունը /City tourism/ ներկայումս մեծ վերելք է ապրում, և այս միտումն առավել նկատելի է եվրոպական քաղաքներում:

Քաղաքային զբոսաշրջությունը կարևորվում է նրանով, որ այն ունի մի շարք գրավչություններ, ինչը հատուկ չէ գյուղական շրջաններին կամ բնական միջավայրերին: Քաղաքային զբոսաշրջության զարգացման խթանիչներն են՝ ճարտարապետությունը, դիզայնը, հուշարձանները, թանգարանները, հյուրանոցային տնտեսությունը, զարգացած ենթակառուցվածքները, ժամանցի վայրերը և այլն: Մեր օրերում քաղաքային զբոսաշրջությունը՝ մշակույթի, պատմության և ժամանցի լավագույն սինթեզն է:

Քաղաքային զբոսաշրջության մյուս առանձնահատկություններից է՝ տվյալ տարածքում տարիների ընթացքում հետևողական կերպով իրականացված տեխնիկական և մշակութային ներդրումները, ինչը տվյալ քաղաքին հաղորդում է տնտեսական և զբոսաշրջային արժեք: Քաղաքային զբոսաշրջության հումքը՝ տվյալ քաղաքի գրավչություններն են, իսկ 21-րդ դարում այդ գրավչությունները պետք է համեմված լինեն նաև գեղեցիկ փաթեթավորմամբ, ճիշտ մարքեթինգային մոտեցմամբ, միջազգային զբոսաշրջային շուկայում ընդունված չափորոշիչներին համահունչ:

Քաղաքային զբոսաշրջության գրագետ կազմակերպման դեպքում այն լիովին կարող է վերադարձնել քաղաքին իր վրա կատարված ծախսերը, արդարացնել ներդրումները՝ աջակցելով քաղաքային զբոսաշրջության կատարելագործմանն ու տվյալ զբոսաշրջային օբյեկտի պահպանմանը: Որքան եզակի և հատուկ է քաղաքային գրավչությունը, այնքան մեծ է այցելուների՝ վճարելու պատրաստակամությունը:
Քաղաքային գրավչություններն ունեն շատ կոնկրետ դեր. ինչքան մեծ և եզակի է գրավչությունը, այնքան մեծ է հյուրընկալող քաղաքի զբոսաշրջային ներուժը: Այդպիսի գրավչություններից կարելի է բազմաթիվ օրինակներ բերել. Էյֆելյան աշտարակը՝ Փարիզում, Էրմիտաժը՝ Սանկտ–Պետերբուրգում կամ Կրեմլը՝ Մոսկվայում:

Քաղաքային գրավչությունների տեսակն ու քանակն օգնում են տվյալ քաղաքի դիրքավորմանը՝ որպես զբոսաշրջային քաղաք տարածաշրջանում կամ միջազգային զբոսաշրջային շուկայում: Առաջին հայացքից թվացող բազմաթիվ շահեկան դրսևորումների հետ մեկտեղ, այդուհանդերձ զբոսաշրջային ուրբանիզացված ռեսուրսները չեն կարող փոխարինվել, օրինակ, լեռներով, ծովափերով և այլն,

փոխարենը՝ քաղաքային զբոսաշրջային ռեսուրսները պահանջում են բացահայտման ժամանակ, ներդրումներ և առաջխաղացման գրագետ ծրագիր։

***

Երևանը որպես քաղաքային զբոսաշրջության կենտրոն

Երևանը Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային շուկայում կարևոր դեր և նշանակություն ունի, քանի որ այն հանդիսանում է պետության հիմնական մշակութային և զբոսաշրջային ենթակառուցվածքների կենտրոն, համայն հայության մայրաքաղաք, երկրի մարդկային ռեսուրսների հիմնական կրող։
Երևանը աշխարհի հնագույն քաղաքներից մեկն է։ Այն հիմնադրվել է Ուրարտու թագավոր Արգիշտի Ա–ի կողմից Էրեբունի անունով դեռևս մ.թ.ա 782 թվականին։ Երևանում է գտնվում հանրապետության գիտական հաստատությունների, համալսարանների և ինստիտուտների, թատրոնների, թանգարանների, համերգասրահների, մարզական կենտրոնների գերակշիռ մեծամասնությունը։
Առանձնակի կարևորվում են իրենց էությամբ եզակի՝ հին ձեռագրերի կենտրոն Մատենադարանը, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը, Հայաստանի պատմության թանգարանը, Ազգային պատկերասրահը, «Հաղթանակ» զբոսայգին, Կենդանաբանական այգին և այլն, ինչի արդյունքում էլ վերջին տարիներին հետևողական կերպով զարգանում է քաղաքային զբոսաշրջությունը։

Երևան քաղաքն իր մշակութային–զբոսաշրջային ռեսուրսներով բավական լուրջ ներուժ ունի 2025 թվականին դառնալու տարածաշրջանում զբոսաշրջային կենտրոն։ Ուղղակի Երևան քաղաքի զբոսաշրջային գրավչության և նշանակություն ներկայացնող գոտիներում ենթակառուցվածքներ ձևավորելիս անհրաժեշտ է սահմանել գործողությունների հստակ պլանավորում։



***

Երևան քաղաքի հյուրանոցային տնտեսության ոլորտը

Երևան քաղաքն այսօր ունի բավական լավ զարգացած, միջազգային չափորոշիչներին չզիջող հյուրանոցային տնտեսություն։ Շուկայում գործում են այնպիսի հյուրանոցային բրենդեր, ինչպիսիք են Արմենիա Մարիոթը, Հայաթ Փլեյս Երևանը, Թուֆենկյանը, Բեստ Վեստեռն Կոնգրեսը, Հոթել Նացիոնալը, Գոլդեն Փելասը։ Առաջիկա չորս տարիների ընթացքում նախատեսվում է նաև միջազգային Վինդհամ հոթել, Կեմպինսկի և Ռեդիսոն Սաս Բլու հյուրանոցային ընկերությունների մուտքը Երևան։

Ներկայումս Երևանի հյուրանոցային տնտեսության՝ նվազագույնը 20 համար ունեցող օբյեկտների թիվը հասնում է 40–ի, արդյունքում՝ մայրաքաղաքում առկա է 4504 ննջատեղ և 2535 համար, բայց, միևնույն է, տարվա կտրվածքով զգացվում է տեղերի պակաս:

***

Զբոսաշրջային վիճակագրություն

Տարեկան Հայաստան ժամանող շուրջ մեկ միլիոն զբոսաշրջիկների գերակշիռ մասի համար Երևան քաղաքը հանդիսանում է զբոսաշրջիկների առաջին հյուրընկալը և հիմնական հանգրվանը: Զբոսաշրջիկների մեծ մասը Ռուսաստանից են, Վրաստանից, Իրանից, ԱՄՆ–ից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Ուկրաինայից: Վերջին տարիներին Երևանում գրանցվել է զբոսաշրջիկների 20-25% աճ, սակայն այդ աճը կրում է սեզոնային բնույթ. զբոսաշրջիկների մեծ մասն այցելում է Երևան մայիս–հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում:



***

Երևան քաղաքի զբոսաշրջային ոլորտի քաղաքաշինական առանձնահատկությունները

21–րդ դարում զբոսաշրջությունը փոխկապակցված է քաղաքային տնտեսության գրեթե բոլոր ոլորտների, հատկապես քաղաքաշինական քաղաքականության հետ: Քաղաքում առկա հնագիտական, պատմամշակութային հուշարձանները, այգիները, զբոսայգիները, հանգստի գոտիները, համապատասխան միջավայրի ձևավորման դեպքում, կարող են մեծ ներուժ ներկայացնել քաղաքի կառուցվածքում զբոսաշրջային կենտրոնների զարգացման համար:

Արդյունքում նման մոտեցումները կարող են մասամբ բեռնաթափել քաղաքի գերծանրաբեռնված կենտրոնական մասը և սպասարկման հագեցվածության տեսանկյունից հավասարակշռել քաղաքի տարածքը: Երևանի քաղաքապետարանն առաջիկա իր ծրագրերում մայրաքաղաքի զբոսաշրջային նկարագրի պատշաճ ձևավորման, բարելավման, ինչպես նաև գրավչությունների զարգացման և զբոսաշրջության զարգացման համար կարևորում է մի շարք քայլերի իրականացում: Այն է՝

1. «Երևան 2025» զբոսաշրջային հայեցակարգի կամ երկարատև զարգացման ծրագրի մշակում
2. Զբոսաշրջության այնպիսի համակարգի ձևավորում, որը կնպաստի Երևան քաղաքի բարենպաստ ու գրավիչ նկարագրի ձևավորմանը
3. Երևանի զբոսաշրջային բրենդի տարածման և քաղաքի դիրքավորման համար անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկում
4. Երևանի վարչական շրջաններում զբոսաշրջիկների համար համապատասխան միջավայրի ձևավորում, ինչն իր հերթին կնպաստի տվյալ տարածքի սոցիալական աշխուժության բարձրացմանը
5. Երևան քաղաքի զբոսաշրջային երթուղիների մշակում ու զարգացում
6. Օտարերկրյա ներդրումների ներգրավում

***

Երևանի զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացումը

Հաշվի առնելով Երևան քաղաքի զբոսաշրջային մեծ ներուժը և տարածաշրջանային զբոսաշրջային կենտրոն դառնալու հնարավորությունը՝ Երևանի քաղաքապետարանը կարևորում է ոլորտի՝ ժամանակի պահանջներին համահունչ զարգացումը, մայրաքաղաքի զբոսաշրջային ենթակառուցվածքների արդիականացումը, քանի որ հյուրանոցային, ռեստորանային, ակումբային զարգացած ենթակառուցվածքները բավարար չեն Երևանում զբոսաշրջային հ ոսքերի աճ գրանցելուն: Մայրաքաղաքային զբոսաշրջության կայուն զարգացման և զբոսաշրջային արդյունքի որակի շարունակական ապահովման համար քաղաքում անհրաժեշտ է ձևավորել և զարգացնել ոլորտը սպասարկող ենթակառուցվածքներ, որոնք կդառնան զբոսաշրջային կենտրոններ:

Երևանի քաղաքապետարանի կողմից մշակվել է քաղաքի ներդրումային առաջարկների փաթեթ, որն ուղղված է զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացմանը: Ներդրումային առաջարկների փաթեթը ներառում է «Հաղթանակ զբոսայգու տարածքի վերակառուցման և արդիականացման, «Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարանի վերակառուցման, Կենդանաբանական այգու արդիականացման, «ՆոյԼենդե պատմամհնագիտական և «Արթսիթիե արվեստի զբոսաշրջության կենտրոնների կառուցման, ինչպես նաև «Հայաս միկրոշրջանի կառուցման ծրագրերը, որոնցից առավել մանրամասն կներկայացնենք «Հաղթանակ զբոսայգու տարածքի վերակառուցման և արդիականացման ծրագիրը, ինչպես նաև համայնքային բյուջեի միջոցներով իրականացվող Կենդանաբանական այգու արդիականացման ծրագիրը:

***

«Հաղթանակ» զբոսայգու տարածքի վերակառուցման և արդիականացման ծրագիր

Այգու պատմությունը սկսում է 1930-ականներից: Այն կոչվում էր «Քաղաքային» այգի Արաբկիրում, իսկ Հայրենական Մեծ պատերազմից հետո վերանվանվեց «Հաղթանակ» այգի: Զբոսայգու տարածքի վերակառուցման և արդիականացման ծրագրի հիմնական նպատակն է ինչպես Երևանի բնակիչների, այնպես էլ զբոսաշրջիկների համար ստեղծել 21-րդ դարին համահունչ ոճային և թեմատիկ հարուստ լուծումներով մի վայր բոլոր տարիքային խմբերի համար, որտեղ միաձուլված են լինելու հանգստի, ժամանցի և զվարճանքի բոլոր երեք տարրերը:

Հատուկ ուշադրություն է դարձվելու Հայաստանի պատմությանը, ավանդույթներին և առասպելներին առնչվող բաղադրիչներին: Հաղթանակ նոր այգին, ըստ նախագծի, կդառնա նորաոճ՝ պահպանելով զբոսայգու հիմնական բաղադրիչները: Այգու ենթակառուցվածքները կնախատեսվեն այնպես, որ այն հնարավոր լինի շահագործել տարվա բոլոր եղանակներին, հատկապես, որ նախատեսվում է նաև ձմեռային այգի: Հաղթանակ զբոսայգու տարբերակող առանձնահատկություններից է լինելու նաև ինտերակտիվ ուսումնական բաղադրիչների կիրառությունը: Արդյունքում՝ այգու բոլոր այցելուները հնարավորություն կունենան օգտվելու տեղեկատվական համակարգերից: Ծրագրով նախատեսված վերակառուցման և արդիականացման աշխատանքների իրականացման դեպքում այն կհանդիսանա տարածաշրջանում եզակի կենտրոն և 2025 թվականին Երևանը կարող է դառնալ տարածաշրջանային տուրիստական կենտրոն, քանի որ նման ծրագիր առկա չէ և ոչ մի հարևան պետությունում:

Ծրագիրը կյանքի կոչելու համար անհրաժեշտ է իրականացնել շուրջ 60 մլն ԱՄՆ դոլար ներդրում: Ետգնման ժամկետը կազմում է 10 տարի: Ներդրողների առաջարկների հիման վրա «Հաղթանակ» զբոսայգու տարածքի վերակառուցման և արդիականացման ծրագիրը կարող է փոփոխվել, լրամշակվել և ներառել նոր բաղադրիչներ



***

Երևանի Կենդանաբանական այգու արդիականացման ծրագիր

Երևանի կենդանաբանական այգու տարածքի վերակառուցման և արդիականացման ծրագրի հիմնական նպատակն է ստեղծել Հայաստանի և Հարավային Կովկասի հարուստ կենսաբազմազանությունը ներկայացնող բազմագործառույթ վայր բոլոր տարիքային խմբերի համար, որը հետաքրքիր կլինի և Երևանի բնակիչների, և զբոսաշրջիկների համար: Այստեղ հնարավոր կլինի կազմակերպել ընտանեկան հանգիստը, սովորել, զվարճանալ, զարմանալ և հաճելի ժամանակ անցկացնել:

Արդիականացված Կենդանաբանական այգին կներառի ազատավանդակներ, ապաստարաններ, մանկական այգի, կենդանաբուժական կլինիկա, ձիաբուժության կենտրոն, բնապահպանական քոլեջ: Այգում նախատեսվում է նաև սրճարան, բացօթյա կինոթատրոն, ուր կցուցադրվեն բնապահպանական և ճանաչողական ֆիլմեր, կգործի վերամշակված թղթից պատրաստված հուշանվերների խանութ և այլն:

Այգու արդիականացման հիմքում ընկած է վանդակային տիպի այգուց անցումը ավելի ժամանակակից, լանդշաֆտային տիպի՝ վանդակից դեպի ազատավանդակ, որտեղ կենդանիները կգտնվեն առավելագույնս հարմարավետ և համապատասխան միջավայրում: Այցելուները կկարողանան շփվել կենդանիների հետ առանց որևէ խոչընդոտի, իսկ որոշ կենդանատեսակների դեպքում կլինեն ապակյա կամ ջրային արգելքներ: Երևանի կենդանաբանական այգու կենդանիների համալրված կազմը ապահովված կլինի իրենց բնական կենսապայմաններին համապատասխան տարածքներով: Երևանի կենդանաբանական այգում առանձին տարածք կհատկացվի մանկական այգուն, որտեղ կցուցադրվեն ընտանի և ձեռնասուն վայրի կենդանատեսակներ: Աշխարհի տարբեր երկրների կենդանաբանական այգիների ներսում գործող այս ենթակառույցը կրթական բացառիկ նշանակություն ունի և մեծ ճանաչում է վայելում հատկապես երեխաների շրջանում, որոնց հնարավորություն է ընձեռվում անմիջականորեն շփվել կենդանիների հետ:

Կենդանաբուժական կլինիկան նորագույն ստանդարտներով կառուցելու և համապատասխան սարքավորումներով համալրելու ծրագիրը Երևանի կենդանաբանական այգու առաջնահերթություններից մեկն է: Արդիականացման ծրագրի իրականացման արդյունքում կենդանաբուժական կլինիկան համալրված կլինի նորագույն բժշկական սարքավորումներով և կգործի ոչ միայն այգում բնակվող կենդանիների համար, այլև համապատասխան հանրային ծառայություններ կառաջարկի: Հարավային Կովկասում առաջին բնապահպանական քոլեջը կստեղծվի ամերիկյան երկամյա բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ համայնքային քոլեջների օրինակով: Ուսման ավարտից հետո շրջանավարտներին հնարավորություն կընձեռվի ուսումը շարունակել արտասահմանում:

Երևանի կենդանաբանական այգին կմիավորի բնության պահպանության համապարփակ հայեցակարգի բոլորը տարրերը՝ հանդես գալով որպես հանգստի գոտի, զբոսաշրջության մեկնակետ, բնապահպանական կրթության տարածաշրջանային կենտրոն, ՀՀ էնդեմիկ և վտանգված կենդանատեսակների բազմացման և վայրի բնություն հետ վերադարձման գիտական ծրագրեր իրականացնող կառույց և այլն: